

համաձայն 2006թ. տնտեսության իրական հատվածում ներդրումների համար ամենագրավիչը կապի ոլորտն է եղել, որը թերևս պայմանավորված է 2005թ-ից այս ոլորտ նոր օպերատորի մուտքով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի ոլորտը դեռևս չի ապահովում ակնկալվելիք ներդրումների ծավալը, քանի որ Հայաստանը՝ թերևս համարվելով բարձր տեխնոլոգիաների և այդ բնագավառում առկա բարձրորակ կադրերի երկիր, իրավամբ դեռևս զիջում է իր մրցակիցներին:

Մեղմամբերի և խմիչքների արտադրությունում օտարերկրյա ներդրումների ծավալը նույնպես փոքր է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս բնագավառում գերակշռում են ներքին ներդրումները:

Չնայած մեր երկրում իրականացվող շինարարական մեծածավալ աշխատանքներին, ներդրումների ծավալները գոհացուցիչ չեն մաս շինարարության բնագավառում, ինչը հետևանք է այն բանի, որ այս ոլորտում բավականաչափ աշխատանքներ կան կատարելու հատկապես շինարարության համակարգման առումով (հողօգտագործման, գոնավորման խնդիրներ):

Ներդրումների ծավալները գոհացուցիչ չեն մաս հյուրանոցային արդյունաբերությունում, այս բնագավառում նույնպես անելիքները շատ են ոլորտի կարգավորման առումով:

Այսպիսով, ընդհանրացնելով ողջ վերոնշյալը, կարելի է արձանագրել, որ ՀՀ կառավարությունն անշուշտ կարևորում է մասնավոր ներդրումների դերը տնտեսական հետագա զարգացմանը խթանելու գործում, հետևաբար ներդրումների աճի տեմպերի առկա միտումները պահպանելու և ավելացնելու նպատակով, ջանք չի խնայում ներդրողների համար առավել բարենպաստ ներդրումային միջավայր ձևավորելու և ամրապնդելու համար: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել կայուն և կանխատեսելի պայմաններ ձեռնարկատիրական գործունեության համար, նվազեցնել տեղական և օտարերկրյա ներդրումների ռիսկերը՝ վերացնելով կամ, գոնե հնարավորինս կրճատելով առկա վարչական խոչընդոտները, արդյունավետորեն ավարտել մասնավորեցման գործընթացը, իշխանական լծակները ուղղորդել հատկապես այն ներդրումային նախագծերի խրախուսմանը և աջակցմանը, որոնք ունեն արտահամայն ուղղվածություն, առընչվում են բարձր տեխնոլոգիաների ոլորտին, վերամշակող արդյունաբերությանը և հատկապես այն ոլորտներին, որոնց հետագա զարգացումը հեռանկարային և շահավետ կլինի Հայաստանի տնտեսության համար:

ՄԱՐԻԱՆԱ ՄԿՐՏՅԱՆ
Ինելոքրանկի ավագ մասնագետ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել վարչական խոչընդոտների հայտնաբերման և դրանց վերացման ուղղությամբ: Այս նպատակով ՀՀ կառավարության միջոցառությամբ, ՀԲ-ի (Համաշխարհային Բանկ) և ՄԲԿ-ի (Միջազգային ֆինանսական կորպորացիայի) համատեղ կառույց հանդիսացող ՕՆԽԾ-ը (Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայություն) 2003թ. աշնանը նախաձեռնեց և 2004թ. վերջին ավարտին հասցրեց «Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» հետազոտության իրականացումը: Հաշվետվությունը ներդրումները կարգավորող միջավայրի մակրո մակարդակի տեսակետ է ներկայացնում, դրանում մանրամասնորեն քննարկելով և վերլուծելով այն տարբեր ընթացակարգերը, որոնցով անցնում են ներդրողները ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և ծավալելու համար: Հետազոտության շրջանակներում համեմատություն է իրականացվել 2000թ. իրականացված համանման ուսումնասիրության արդյունքների հետ, համաձայն որի տնտեսվարման վրա ազդող մի շարք ընթացակարգերում նշանակալից բարեփոխումներ են տեղի ունեցել, ներառյալ ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը:

Սակայն առկա է դեռևս վարչական ընթացակարգերի մի ետվար զանգված, որոնք բարդ և դժվար հաղթահարելի են մնում հատկապես փոքր և մոլոր հիմնադրվող ընկերությունների համար: Դրանք են՝ օտարերկրյա ներդրողներին կացության կարգավիճակի տրամադրման խնդիրները, մոլոր ընկերությունների գրանցումը, հարկային վարչարարությունն ու ստուգումները, մաքսային ընթացակարգերը, դատական համակարգի անկախացումը, պետական հողի մասնավորեցումը և վարձակալումը, շինարարության համակարգումը:

Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա ներդրողների մուտք գործելու և կացության կարգավիճակի տրամադրման խնդիրներով զբաղվում է ՀՀ ոստիկանության անձնագրային ու վիզաների վարչությունը: ՀՀ մուտք գործելու համար անհրաժեշտ է ունենալ մուտքի արտոնագիր: Մուտքի արտոնագրերի տեսակներն են.

- մեկանգամյա մուտքի արտոնագիր մինչև 21 օր ժամկետով
- տարանցիկ մուտքի արտոնագիր մինչև 3 օր ժամկետով
- երկարաժամկետ մուտքի արտոնագիր 21 օրից ավելի ժամկետով:

ՀՀ-ում աշխատանքի անցնելու համար օտարերկրյա քաղաքացիներից աշխատանքի թույլտվություն չի պահանջվում: Այնուամենայնիվ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով, ՀՀ-ում 90 օրից ավել մնալու համար պահանջվում է ունենալ կացության կարգավիճակ: ՀՀ դեռևս մուտք չգործած օտարերկրյա քաղաքացիներ կացության կարգավիճակ ստանալու համար կարող է դիմել արտերկրում ՀՀ դեսպանություններ և հյուպատոսություններ: Կացության կարգավիճակներն են.

- կացության ժամանակավոր կարգավիճակ՝ տրամադրվում է մինչև 1 տարի ժամկետով

- կացության սովորական կարգավիճակ՝ տրամադրվում է դրա համար նախատեսված ստանդարտ ընթացակարգ անցնելու դեպքում
- կացության հատուկ կարգավիճակ՝ տրամադրվում է անձնագրի տեսքով 10 տարի ժամկետով

ՀՀ-ում աշխատելու իրավունք ունեն կացության ժամանակավոր կարգավիճակ ունեցողները, իսկ հատուկ կարգավիճակ ունեցողները՝ նաև ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու: ՕՆԽԾ 2004թ. հաշվետվությունում եզրակացվել է, որ մուտքի հետ կապված ընթացակարգերը ներդրողների կողմից չեն դիտվում որպես չափազանց բարդ, սակայն դեռևս առկա է որոշ դժգոհություն կապված տեղեկատվության տրամադրման հետ: Այնուամենայնիվ պետք է նշել, որ ՀՀ ԱԳՆ ինտերնետային էջում հստակ, պատշաճ և սպառիչ տեղեկատվություն է գետնոված արտերկրում ՀՀ դիվանագիտական առաքելություններում և հյուպատոսություններում մուտքի, գրոսաշրջիկային արտոնագրերի և կացության հատուկ կարգավիճակների տրամադրման ընթացակարգերի վերաբերյալ¹:

Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին օրենքը ուժի մեջ է մտել 2002թ²: ՀՀ-ում իրավաբանական անձ գրանցելու համար անհրաժեշտ է պետական գրանցում կատարել տարբեր պետական մարմիններում՝ ներառյալ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալությունը, ՀՀ ԿԱ ՀՊԾ-ը (կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն) ներառյալ Սոցիալական Ապահովության պետական հիմնադրամը, և ԿԱ ԱՎԾ-ը (կառավարությանն առընթեր ազգային վիճակագրական ծառայություն): Գրանցման գործընթացը ներառում է նաև ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությունից կնիքի թույլտվության ստացումը և կնիքի պատրաստումը «Կնիք» ՓԲԸ ի կողմից: Գործընթացի տևողությունը հաշվարկման գումարային մեթոդ կիրառելիս տևում է 24 օր: 5 տարբեր մարմիններում գրանցվելը պահանջում է մոտ 10 ընթացակարգերի իրականացում: Ներդրողները ստիպված են մույն տեղեկատվությունը և փաստաթղթերը ներկայացնել բազմաթիվ մարմիններ՝ հնարավորություն չունենալով այդ տեղեկատվությունը ներկայացնել մեկ միասնական կենտրոնացված մարմնի, յուրաքանչյուր մարմին գործարարին տրամադրում է իր սեփական գրանցման համարը, որի պատճառը միասնական գրանցման և տեղեկատվության արդյունավետ փոխանցման համակարգերի բացակայությունն է: Բացի այդ, գործարարները ստիպված են անձամբ այցելել բոլոր մարմինները՝ բավարարելու համար նրանց փաստաթղթային պահանջները: Անցումային տնտեսությամբ առաջատար երկրների և նոր եվրոպական երկրների մեծ մասի հետ համեմատությամբ, առկա են բավական մեծ թվով պահանջներ, որոնք անխուսափելիորեն պահանջում են ավելի շատ միջոցներ գործարարներից (և՛ ժամանակ, և՛ գումար): Նման համակարգը չափից դուրս ծանրաբեռնեցուցիչ է գործարարների համար:

Համեմատելով Հայաստանում պաշտոնական գրանցման ժամկետները այլ երկրների հետ նկատվում է, որ բարելավման առումով բավական աշխատանք կա կատարելու՝ ընկերության գրանցման արագության և պարզության առումով առաջատար երկրներին հասնելու համար: Այնուամենայնիվ, չնայած Հայաստանում բիզնես գրանցելու ժամկետները և արժեքը համապատասխանում են միջին միջազգային փորձին, մեր կարծիքով, այս բնագավառում անհրաժեշտ է.

- ուղեցույցների, տեղեկատվական գրքույկների և բրոշյուրների հրատարակում,
- հիմնադրվող առևտրային կազմակերպությունների կազմակերպատիրական տեսակի ընտրության հարցում օգնության ցուցաբերում գործարարներին,
- ընկերության հիմնման, վերակազմավորման և լուծարման, ինչպես նաև բոլոր մարմիններում նրա գրանցման ընթացակարգի հստակ նկարագրություն՝ մանրամասն նշելով այդ մարմինների կողմից քննության առնման վերջնաժամկետները և գրանցման պաշտոնական արժեքները, ինչպես նաև բողոքարկման ընթացակարգերը,
- գոյություն ունեցող առևտրային անվանումների ինտերնետային տեղեկատվությունից ստեղծում, ինչը կօգնի գործարարներին ընտրել ընկերության համար եզակի առևտրային անվանումը,
- բիզնեսի գրանցման, հարկային գրանցման (ներառյալ սոցիալական ապահովության պետական հիմնադրամը) ընթացակարգերի միավորում և մեկ գրանցման ձևի կիրառում: Պետական ռեգիստրի կողմից կարող է տրամադրվել ընկերության մեկ հաշվառման նպատակով, համար բոլոր վարչական ընթացակարգերի համար:

Ներդրողների կողմից արտահայտվող քննադատությունը հիմնականում պայմանավորված է հարկային համակարգի բարդությամբ³: Հարկային ոլորտի առաջին և ամենակարևոր խնդիրը հարկային վարչարարությունն է: Հարկային վարչարարությունը գործարարների կողմից դեռևս ընկալվում է որպես մասնավոր հատվածի զարգացման խոչընդոտ: Չնայած այս ոլորտում տեղի ունեցած բոլոր դրական փոփոխություններին, հարկային վարչարարությունը ներդրողների կողմից նշվում է որպես ՀՀ-ում մասնավոր հատվածի զարգացումը և ներդրումների աճը լրջորեն զսպող առավել խնդրահարույց խոչընդոտ: Մասնավորապես, ներդրողների կողմից նշվում են հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումները, ոչ համահավասար մոտեցումը, հարկային օրենքների և վարչարարության խտրական, հայեցողական կիրառումը:

Հարկային վարչարարության հետ կապված խնդիրները ավելի մեծ ուշադրության են արժանի, քանզի անցումային տնտեսությամբ երկրների համար բավականին տարօրինակ բարձր հարկային դրույքները ավելի քիչ խնդրահարույց են, քան հարկային վարչարարությունը:

¹ www.armeniaforeignministry.com.

² www.stateregister.am.

³ «Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» ՕՆԽԾ:

ԱԱՀ-ի հետ վերադարձման խնդիրը ներդրողների կողմից հանդիպող առավել մտահոգիչ հարցն է: Ինչպես ցույց են տվել ՕՆԽԾ վերլուծության արդյունքները, և՛ ներդրողները, և՛ հարկային մարմնի աշխատակիցները համաձայնվում են, որ ԱԱՀ-ի ետ վերադարձի մեխանիզմը լավ չի գործում: Ներդրողները հայտարարում են, որ ԱԱՀ-ի ետ վերադարձի գործընթացը հարկային մարմինների կողմից օգտագործվում է որպես եկամուտներն ավելացնելու գործիք՝ ԱԱՀ ետ վերադարձման ենթակա գումարները չվճարելու միջոցով:

Հարկային մարմինների ներկայացուցիչները հայտարարում են, որ ստուգման ընթացքում որպես կանոն ընկերությունների հաշվապահություններում անճշտություններ են հայտնաբերվում, որոնց հետևանքով առաջացող տույժերի և տուգանքների դիմաց ԱԱՀ գումարային հաշվանցումը հարկային ստուգողի ժամանակի արդյունավետ օգտագործումն է:

Նմանատիպ խնդիրներ կան մաքսային ընթացակարգերի առումով: Թեև մաքսային օրենսգիրքը ամբողջովին համապատասխանում է ԱՀԿ (Առևտրի համաշխարհային կազմակերպություն) պահանջներին և նրանում իրականացված բարեփոխումների կարևորագույն արդյունք է հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերի քանակի նվազեցումը, այնուամենայնիվ մաքսային ընթացակարգերի և արտաքին առևտրի կանոնակարգերի քանակն ու դրանց վրա ծախսվող ժամանակը շարունակում է լրջորեն խոչընդոտել գործարարությանը:

Կարևորագույն խնդիրը ներմուծվող ապրանքների գնահատման ժամանակ լայնորեն կիրառվող շուկայական արժեքի սկզբունքն է: Մաքսային մարմինների պաշտոնյաները բողոքում են, որ ներմուծողները պարբերաբար իջեցնում են ապրանքների գնման գները՝ խուսափելու համար ներկրման տուրքերից, ԱԱՀ ից և ակցիզային հարկից: Սրան պատասխան մաքսային, կոմիտեն կիրառում է շուկայական արժեքի գնահատման սկզբունքը, իսկ հարկային մարմինները փորձում են հայտնաբերել հարկերից խուսափելու մեջ կասկածվողներին՝ ԱԱՀ-ի ետ վերադարձի ենթակա գումարների ստուգման գործընթացի միջոցով: Ձուգահեռաբար, իմանալով, որ կիրառվելու է գնահատման շուկայական արժեքի սկզբունքը՝ ներմուծողները ամբողջովին չեն հայտարարագրում իրենց ներմուծման ծավալները, որի արդյունքում հարատևում է գերազանցողական և թերհայտարարագրման արատավոր շղթան:

Բացի այդ, առկա է նաև մաքսային և հարկային վարչարարություն իրականացնելու համագործակցության բացակայությունը, ինչը առաջ է բերում մի շարք անհարմարություններ ներդրողների համար:

Հարկային դիրտի մյուս կարևորագույն խնդիրը օրենսդրական անորոշությունն է: Այսինքն, հարկային օրենքների փոփոխությունների հաճախակիությունը, հարկային դրույքաչափերի և տուգանքների սահմանման համար հիմնավորումների անբավարարությունը և հակասությունները օրենսդրության տարբեր կետերի, ինչպես նաև օրենքների և կառավարության որոշումների միջև: Այս իրավիճակը բնականաբար հարկ վճարողների համար խույս տալու և մաքսային և հարկային պաշտոնյաներին կոմունակի վճարումներ կատարելու խթաններ է ստեղծում: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է մեծացնել օրենսդրական թափանցիկությունը, առաջարկվող օրենսդրական փոփոխությունները քննարկել մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավմամբ: Մասնավոր հատվածը միշտ պետք է հետադարձ կապի մեջ լինի և մինչև փոփոխված տարբերակի ուժի մեջ մտնելը բավական ժամանակ ունենա դրան արձագանքելու համար:

Չնայած օրենսդրական մի շարք բարեփոխումներին, ստուգումները դեռևս մնում են գործարարության հանդեպ կիրառվող պատժիչ գործիք: Որոշ ներքին կարգեր հստակ չեն՝ կապված հարկ վճարողների պարտականությունների հետ, ինչը օգտագործվում է որպես գործընթացի բարդացման գործիք, որն էլ ի վերջո հանդես է գալիս որպես կաշառակերության միջոց: Հետևաբար, անհրաժեշտ է լրացնել հարկային օրենքների կիրարկման վերաբերյալ հստակ և հասանելի տեղեկատվության պակասը, ինչպես նաև հստակեցնել ստուգման ընթացակարգերը՝ ընդհանուր ստուգումների փոխարեն նախապատվությունը տալով նպատակային հարկային ստուգումներին:

Կարևոր խնդիրներ են հանդիսանում նաև հարկային բարձր դրույքները և կանխավճարներ կատարելու անօրինական պահանջները: Բացի կանխավճարներ կատարելու օրենքով նախատեսված պահանջներից, ներդրողները բողոքում են նաև հարկային մարմինների՝ իրավաբանորեն սահմանված առավելագույն չափից բարձր և օրենքից դուրս «կամավոր կերպով» կանխավճարների կատարման կանոնավոր, բայց ոչ պաշտոնական պահանջներից:

Այսպիսով, ընդհանրացնելով ողջ վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ դեռևս բավականին աշխատանք կա կատարելու ներդրողների համար առավել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման և կապիտալի ներգրավման նպատակով երկրների միջև ծավալված մրցապայքարում մրցունակ լինելու առումով: Ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվող ջանքերն անհրաժեշտ է խթանել և հզորացնել քաղաքական կամքով՝ դրանց հաղորդելով հստակ գիտակցում և ուղղություն (հատկապես արտահանման ուղղվածություն ունեցող բարձր տեխնոլոգիաներին, վերանշակող արդյունաբերությանն առընչվող ներդրումային նախագծերին օժանդակելու առումով): Կառավարության կողմից պահանջվում է ջանքերի իրականացման առավել կենտրոնացում և շարունակականության անհրաժեշտություն: Առաջնահերթ լուծման կարիք ունեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ օտարերկրյա ներդրողների կացության կարգավիճակների տրամադրման վերաբերյալ պատշաճ տեղեկատվության ապահովումը, իրավաբանական անձանց պետական գրանցման ընթացակարգի պարզեցումը, գրանցման ժամկետների կրճատումը, գրանցման մեկ միասնական մարմնի ձևավորումը (որը կկրճատի ներդրողների ժամանակային և ֆինանսական ծախսերը), գրանցման ընթացակարգերի վերաբերյալ բավարար տեղեկատվության հասանելիության ապահովումը, հարկային և մաքսային օրենքների պարզեցումը, հստակեցումը, ճշգրտումները, հակասությունների և տարընթերցումների վերացումը, որոնք կբացառեն հարկ վճարողի կողմից հարկային գործակալներին կողմնակի վճարումներ կատարելու անհրաժեշտությունը, հարկային դրույքների իջեցումը, պարտադիր «կամավոր» կանխավճարներ կատարելու պահանջների վերացումը և այլն: